

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները.....	10
5.2. Բյուջեի ծախսերը.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ և վարկեր	15
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	18
8. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Տնտեսական ակտիվության աճի տեմպը ապրիլից հետո շարունակաբար դանդաղում է: Սակայն, եթե մայիս և հունիս ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշները բացարձակ թվով ավելի բարձր են, քան նախորդ տարվա համապատասխան ամիսների անկման ցուցանիշները, ապա հուլիսին այն զգալիորեն ցածր է նախորդ տարվա հուլիսի ցուցանիշից: Այսպես, 2021թ. հուլիսին գրանցվել է 5.8% տնտեսական ակտիվության աճ (12-ամսյա), այն դեպքում, երբ նախորդ տարվա հուլիսին ՏԱՑ-ը նվազել էր 10.2%: Դա նշանակում է, որ 2021թ. հուլիսին տնտեսությունում ամբողջական թողարկումը շուրջ 5.0%-ով զիջել է 2019թ. համապատասխան ցուցանիշին: Ամսական աճերի նվազման պայմաններում կուտակային՝ հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 5.2%: Կուտակային ՏԱՑ-ը նույնպես բացարձակ արժեքով փոքր է 2020թ. անկումից, հետևաբար, կարելի է նշել, որ տնտեսությունը դեռևս չի վերականգնվել ճգնաժամից: 2019թ. նույն ամիսների համեմատ 2021թ. հունվար-հուլիս ամիսների ամբողջական թողարկումը նվազել է շուրջ 0.8%-ով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2021թ. հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ի 5.2% աճն առավելապես պայմանավորված է առևտրի ոլորտում տնտեսական ակտիվության աճով, որի նպաստումը կազմել է 2.7 տոկոսային կետ: Մնացած ոլորտները նույնպես ունեցել են դրական նպաստում տնտեսական ակտիվությանը, որոնցից ամենամեծը եղել է ծառայությունների նպաստումը՝ 1.0 տոկոսային կետով, իսկ արդյունաբերության և շինարարության նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.6 և 0.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-հուլիս ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճը կայունացել է որոշակի ցածր մակարդակում՝ հիմնականում պայմանավորված հանքարդյունաբերության աճով: Ապրիլից հետո արդյունաբերության աճի տեմպը զգալիորեն դանդաղել է՝ հուլիսին կազմելով ընդամենը 1.7%: Հունվար-հուլիս ամիսների աճը կայունացել է 2.1% մակարդակում:

2021թ. հունվար-հունիս ամիսների տվյալներով՝ արդյունաբերության աճը առավելապես եղել է հանքարդյունաբերության 7.2% աճի հաշվին, որի նպաստումը կազմել է 1.4 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերությունը հունվար-հունիս


¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-հուլիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

ամիսներին նախորդ տարվա համեմատ նվազել է 1.1%-ով՝ ընդհանուր արդյունաբերությանը ունենալով 0.7 տոկոսային կետով բացասական նպաստում:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերում գրանցվել է աճ՝ համապատասխանաբար 9.5% և 5.6%, որոնց նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է համապատասխանաբար 1.3 և 0.1 տոկոսային կետ:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճը նույնպես գտնվում է բավական ցածր մակարդակում: Շինարարության ծավալները հուլիսն աճել են ընդամենը 2.2%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ամսվա անկումը կազմել էր 19.5%: Կուտակային՝ հունվար-հուլիս ամիսների շինարարության իրական ծավալը 2020թ. համեմատ աճել է 8.8%-ով՝ մինչև նույն ժամանակ 2019թ. համեմատ նվազելով 15.7%-ով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունները միակ ոլորտն է, որտեղ գրանցվել է 12-ամսյա աճի արագացում: 2021թ. հուլիսին ծառայությունների աճը կազմել է 14.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.4 տոկոսային կետով։ Սակայն, այդ արագացումը պայմանավորված է «բազայի էֆեկտով», այսինքն՝ այն հանգամանքով, որ նախորդ տարի հուլիսին ծառայությունների անկումը խորացել էր 5.3 տոկոսային կետով։ Ընդ որում, այս ոլորտում նույնպես վերականգնում չի նկատվում, քանի որ ծառայությունների իրական ծավալը 2019թ. համեմատ դեռևս ցածր է 5.5%-ով։

Հունվար-հունիս ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 2.7%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 62.5% աճը (նպաստումը կազմել է 3.2 տոկոսային կետ)։ Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 8.9 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 36.1% անկումը։ Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական դինամիկա՝ ընդհանուր աճին նպաստելով միջին հաշվով շուրջ 1.1 տոկոսային կետի չափով։

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-հուլիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել։

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում նույնպես գրանցվել է աճի տեմպի կտրուկ դանդաղում: Հուլիս ամսին առևտրի ծավալների աճը նախորդ տարվա հուլիսի համեմատ կազմել է 5.2%՝ հունիսի ցուցանիշի համեմատ դանդաղելով 5.1 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 7.5%: Սա այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում առևտրի ոլորտի անկումը կազմել էր 11.0%: 2021թ. հունվար-հուլիս ամիսներին 2019թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ առևտրի ծավալները նվազել են շուրջ 4.3%-ով:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Տնտեսության աճի տեմպի դանդաղումն արտացոլվել է նաև արտահանման աճի դինամիկայում: 2021թ. հուլիսին նախորդ տարվա նույն

ամսվա համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 23.8%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 7.5 տոկոսային կետով: Արդյունքում կուտակային աճի արագացումը նույն տեմպով չի շարունակվել՝ կայունանալով 23.2%-ի շուրջ: Հատկանշական է, որ արտահանման աճի տեմպի դանդաղումը տեղի է ունենում ՀՀ գործընկեր երկրների տնտեսական բարձր աճերի պայմաններում: Օրինակ՝ ՌԴ տնտեսական աճը ապրիլից հունիս ամիսներին կազմել է համապատասխանաբար 10.8%, 11.1% և 8.5%³:

Հունվար-հունիս ամիսների տվյալներով⁴ արտահանման 23.0% աճից 13.2 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 38.8% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «մանածագործական իրեր» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.8 և 2.8-ական տոկոսային կետ:


Արտահանման աճին շարունակել են հակազդել «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 53.3%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 13.5%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 1.3 և 1.9 տոկոսային կետով:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում հունվար ամսվա արտահանման անկման ցուցանիշը -7.9%-ից դարձել է -7.7%, փետրվար-մայիս ամիսների կուտակային ցուցանիշները բարելավվել են 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների կուտակային աճը վատթարացել է 0.3 տոկոսային կետով:

³ Աղբյուրը՝ <https://tradingeconomics.com/russia/leading-economic-index>

⁴ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-հուլիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ի տարբերություն արտահանման՝ ներմուծման աճի տեմպն արագացել է: 2021թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 22.4%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 7.4 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը կազմել է 10.6%, սակայն, եթե այդ ցուցանիշից հանենք բազայի էֆեկտը, ապա կուտակային ցուցանիշը կլինի բացասական՝ 5.1%-ի չափ:

2021թ. հունվար-հունիս ամիսների տվյալներով⁵ ներմուծման աճին հիմնականում նպաստել են «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «հանքահումքային արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.3, 2.1 և 1.0 տոկոսային կետ: Ներմուծման աճին շուրջ 0.6 տոկոսային կետով հակազդել է «պատրաստի սնունդ» ապրանքախմբի ներմուծման անկումը, որը կազմել է 6.9%:


ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են 2021թ. նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում 0.1 տոկոսային կետով վատթարացել են հունվար-փետրվար և հունվար-մայիս ամիսների կուտակային աճերը, և 0.4 տոկոսային կետով բարելավվել է հունվար-հունիս ամիսների կուտակային աճը:

⁵ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-հուլիս ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2021թ. հունվար-հունիս ամիսներին միջին աշխատավարձերն աճել են և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում⁶: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.4%-ով՝ կազմելով 196,440.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 3.9%-ով և կազմել 168,347.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.9%-ով՝ կազմելով 209,937.0 դրամ:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-հունիս ամիսներին, %




Սակայն, պետք է նշել, որ անվանական աշխատավարձի աճի տեմպը զիջել է գնաճի տեմպին, ինչի պատճառով իրական աշխատավարձերը (գնաճով ճշգրտված աշխատավարձերը) նվազել են: Այսպես, 2021թ. հունվար-հունիսին գների միջին աճը կազմել է 5.7%, որի պայմաններում ընդհանուր տնտեսությունում իրական աշխատավարձը նվազել է 0.3%-ով:

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը օպերատիվ տվյալների հրապարակման հետ միասին: Փոխարենը, աշխատավարձի տվյալները հրապարակվում են ավելի ուշ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժեզրկման տեմպը դանդաղել է: Հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամը արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին, հատկապես հունիսի վերջում և հուլիսին, արժեզրկման տեմպը դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կազմել է համապատասխանաբար 6.6% և 13.9%: Դրամի արժեզրկումը գրեթե մարել է հուլիսի վերջի դրությամբ՝ հուլիսի վերջին օրը

կազմելով 486.2 դրամ՝ նախորդ տարվա նույն օրվա 485.3 դրամի համեմատ: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը տարեսկզբից ունեցել է արժևորման միտում, որը, սակայն, աստիճանաբար դանդաղել է: Հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.2%-ով:


5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁷

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը արագացել է փոքր չափով:

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 10.4%-ով՝ կազմելով 920.2 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը կազմել է 10.5%, իսկ հարկային եկամուտների ծավալը կազմել է 872.5 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճի տեմպը հունվար-հուլիսին հունվար-հունիսի նկատմամբ արագացել է ընդամենը 0.2 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա համապատասխան ամիսների ընթացքում տեղի էր ունեցել հարկային եկամուտների անկման խորացում շուրջ 0.5 տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները հունվար-հուլիս ամիսներին աճել են 7.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 27.3%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-հուլիս ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 11.9%), մաքսատուրքի (աճը՝ 40.8%) և պարտադիր սոցիալական վճարների (աճը՝ 94.9%) գծով հարկային մուտքերի

⁷ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.8, 1.8 և 1.5 տոկոսային կետ:


2021թ. առաջին կիսամյակում հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում կազմել է 26.2%՝ 2020թ. առաջին կիսամյակի նկատմամբ կրճատվելով 0.6 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ հարկային եկամուտներն աճում են տնտեսությունից դանդաղ տեմպով՝ մատնանշելով հարկային վարչարարության վատթարացման մասին: Ընդ որում, հարկեր/ՀՆԱ հարաբերակցության անկումը տեղի է ունեցել այն պայմաններում, երբ օրենսդրական փոփոխությունների հաշվին շուրջ 94.9%-ով աճել են պարտադիր սոցիալական վճարները, նախորդ տարի եղել է շահութահարկի արտոնություն (2020թ. երկրորդ եռամսյակում շահութահարկի կանխավճարներ առհասարակ չեն իրականացվել), աճել են մաքսատուրքերը և այլն: Այսինքն՝ բոլոր գործոնները խոսում են այն մասին, որ պետք է տեղի ունենար հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճ, որը, սակայն, ընդհակառակը՝ նվազել է:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-հուլիս		2021թ. հունվար-հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.1	-5.1	10.5	10.5
ԱԱՀ	-6.6	-2.2	11.9	3.8
Շահութահարկ	-15.4	-2.2	10.6	1.4
Եկամտային հարկ	2.7	0.8	2.7	0.8
Ակցիզային հարկ	1.2	0.1	-13.5	-1.1
Շրջանառության հարկ	-3.5	-0.1	13.0	0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	11.3	0.4	16.2	0.6
Մաքսատուրք	-28.3	-1.7	40.8	1.8
Սոցիալական վճար	15.0	0.2	94.9	1.5
Այլ հարկային եկամուտներ	20.2	0.3	77.2	1.4
Պետական տուրք	-15.9	-0.4	14.5	0.3

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը շարունակում են բարձր տեմպով աճել: 2021թ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 1051.6 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 12.1%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 9.8%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 43.1% աճով: Ընդ որում, հարկ է նշել, որ հուլիսին իրականացվել է ընդամենը 13 մլրդ դրամի չափով կապիտալ ծախս, որը շուրջ 23%--ով ցածր է նախորդ տարվա հուլիսի կապիտալ ծախսերից: Իսկ 43.1% աճը պայմանավորված է ընթացիկ տարվա մարտ ամսին իրականացված կապիտալ ծախսերով (միայն մարտ ամսին կատարվել է մոտ 41 մլրդ դրամի կապիտալ ծախս), ինչը պայմանավորված է ռազմական ծախսերի իրականացմամբ (ՀՀ ՊՆ շենքային պայմանների բարելավում): Հետևաբար, կարող ենք նշել, որ տնտեսության արտադրողականության բարձրացմանն ուղղված կապիտալ ծախսերը շարունակում են չիրականացվել:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդը զգալիորեն աճել է: 2021թ. հուլիսին պետական բյուջեի ծախսերը (հիմնականում ընթացիկ ծախսերը) զգալիորեն գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում պակասուրդը մեծացել է շուրջ 56 մլրդ դրամով: Պակասուրդի ծավալը շուրջ 25.4 %-ով գերազանցում է 2020թ. համապատասխան ամիսների ցուցանիշին, սակայն զգալիորեն ցածր է 2021թ. նույնիսկ հունվար-հունիս ամիսների համար ծրագրավորված ցուցանիշից:


5.4. Պետական պարտք

2021թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,973.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ աճելով 13.0%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,507.8 մլն ԱՄՆ դոլար և 2020թ. նույն ամսվա համեմատ աճելով 14.0%-ով: Նախորդ ամսվա համեմատ կառավարության պարտքն աճել է 106.8 մլրդ դրամով, կամ 1.3%-ով, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով:

Այս առումով, սակայն, մտահոգության առիթներ կան, քանի որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության պայմանների խստացմանը զուգահեռ աճում են նաև պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները: Այսպես, հուլիսի դրությամբ պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները հասել են 7.9%-ի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 2.3 տոկոսային կետով: Իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը հունիսի դրությամբ աճել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 8.4% (հուլիսին միջնաժամկետ պարտատոմսեր չեն

տեղաբաշխվել): Այս դինամիկան ցույց է տալիս, որ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը «թանկանում է» և հետևաբար առաջիկայում մեծանալու են կառավարության պարտքի սպասարկման ծախսերը՝ հանգեցնելով այլ ծախսերի համար առկա ռեսուրսների սահմանափակմանը:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը առավել կտրուկ է արագացել հուլիս ամսին: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա հուլիսին կազմել է 8.2%՝ նախորդ ամսվա նկատմամբ արագանալով 1.7 տոկոսային կետով: Գնաճային միջավայրին արձագանքելով՝ ՀՀ

ԿԲ-ն օգոստոսի սկզբում բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.0%: Նախորդ ամիսներին ԿԲ-ն նույնպես բարձրացրել էր տոկոսադրույքները, սակայն գների տեմպի դանդաղման փոխարեն գնաճն ավելի կտրուկ է արագացել:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. հուլիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը դանդաղել է: Հուլիսի վերջի դրությամբ ավանդների ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 7.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.4 տոկոսային կետով: Վերջին ամիսներին ավանդների ծավալների աճի արագացումը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա նույն ամիսներին ավանդների դուրսբերման հետևանքով ցածր բազայի ձևավորմամբ, սակայն հուլիսին աճի տեմպի դանդաղումը կապված չէ այդ երևույթի հետ:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է ոչ ռեզիդենտների կողմից ներդրված ավանդների շուրջ 1.6%-ով նվազմամբ, ինչի հետևանքով դրանք ընդհանուր ավանդների աճին հակազդել են 0.4 տոկոսային կետով:


Ավանդների աճին հիմնականում՝ շուրջ 5.9 տոկոսային կետով, նպաստել են ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, ինչը խոսում է այն մասին, որ ձեռնարկությունները հետաձգում են իրենց ներդրումային ծրագրերը:

Վարկերի ծավալը 2021թ. հուլիսին նվազել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2021 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է շուրջ 3.0%-ով: Ընդ որում, վարկերի ծավալը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ նվազել է շուրջ 8.4%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի նվազումը հիմնականում պայմանավորված է սպառողական վարկերի, ինչպես նաև առևտրի, ծառայությունների և տնտեսության այլ ճյուղերին տրամադրվող վարկերի նվազմամբ: Վարկերի նվազմանը էականորեն հակազդել են հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը: Վերջիններս, ըստ էության, փոխկապակցված են և տնտեսության ներկա պայմաններում դրանց աճը բացատրվում է այն հանգամանքով, որ կառավարությունը հանրությանը ազդակներ է հաղորդել հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի հնարավորության ապագա վերացման վերաբերյալ: Դա էլ ստիպում է շինարարներին արագացնել


բնակելի շենքերի կառուցումը, իսկ բնակչությանը՝ արագ հիպոթեքային վարկեր վերցնել և հասցնել բնակարան ձեռք բերել:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում սկսում է աստիճանաբար սրվել: 2021թ. օգոստոսին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն աճել է հուլիսի համեմատ՝ կազմելով 346 դեպք: Մահվան միջին օրական դեպքերը նույնպես աճել են՝ կազմելով 6 դեպք՝ նախորդ ամիսների 3 դեպքի համեմատ:

Աշխարհի մյուս երկրների համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով օգոստոսի 24-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 50-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 44-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով Հայաստանը իր դիրքը չի փոխել՝ մնալով 34-րդ տեղում:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. օգոստոսի 24-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը աստիճանաբար դանդաղում է: Ընթացիկ տարվա հունվար-ապրիլ ամիսներին տնտեսության վերականգնումը տեղի էր ունենում սպասվածից ավելի արագ տեմպերով: Սակայն, մայիսից սկսած տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպը սկսել է դանդաղել: Հունվար-հուլիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը բացարձակ արժեքով արդեն ավելի ցածր է, քանի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի անկման ցուցանիշը, ինչը նշանակում է, որ տնտեսությունը չի վերականգնվել ճգնաժամից: Ավելին, աճի տեմպի դանդաղումը նշանակում է, որ հաջորդ ամիսներին 2019թ. համեմատ տնտեսական անկումը կարող է խորանալ:

2. Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման պայմաններում նվազել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Պետական բյուջեի ծախսերի բարձր աճերի պայմաններում հարկեր/ՀՆԱ-ի նվազումը մտահոգիչ երևույթ է, հատկապես այն պայմաններում, երբ առկա են մի քանի օրենսդրական փոփոխություններ, որոնք պետք է հանգեցնեին հարկեր/ՀՆԱ-ի աճին (շահութահարկի կանխավճարի տեղափոխում 2020-ից 2021 թվական, պարտադիր սոցիալական վճարների բարձրացում և այլն): Հարկեր/ՀՆԱ-ի կրճատումը հարկային վարչարարության վատթարացման հետևանք է, որին անհրաժեշտ է արձագանքել և մինչև տարեվերջ քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

3. Պետական բյուջեի պակասուրդի ավելացման պայմաններում վատթարացել են կառավարության համար ներքին պարտքի ներգրավման պայմանները: Թեև պետական բյուջեի պակասուրդը դեռևս բավական փոքր է 2021թ. բյուջեով ծրագրավորված ցուցանիշից, այն զգալիորեն աճել է հուլիսին: Մինևնույն ժամանակ զգալիորեն աճել են պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները՝ դժվարացնելով ներքին ռեսուրսների հաշվին պակասուրդի ֆինանսավորումը: Բացի այդ, բարձր տոկոսադրույքները, որոնք հետևանք են կոշտացված դրամավարկային քաղաքականության, հանգեցնելու են հետագա տարիներին պարտքի տոկոսավճարների բեռի ավելացմանը և բյուջեի մյուս կարևոր ծախսերի համար առկա ռեսուրսների սահմանափակմանը:

4. Վարկերի ծավալը սկսել է նվազել: Հուլիս ամսվա տվյալներով վարկերի ծավալները կրճատվել են շուրջ 3.0%-ով: Ընդ որում, նվազումը զգալիորեն պայմանավորված է տնտեսության իրական հատվածին ուղղված վարկերի կրճատմամբ: Դա նշանակում է, որ նոր վերցված վարկերը ավելի քիչ են քան նախկինում վերցված վարկերի մարումները, հետևաբար կարելի է նշել, որ տնտեսությունը վարկեր գրեթե չի ստանում: Դրան հավելելով ձեռնարկությունների

կողմից ավանդների ավելացումը բանկերում՝ այն դեպքում, երբ ավանդների տոկոսադրույքները չեն աճել, պարզ է դառնում, որ ձեռնարկությունները չեն շտապում նոր ծրագրեր իրականացնել վարկային ռեսուրսների կամ սեփական միջոցների հաշվին՝ նախընտրելով կա՛մ մարել վարկային պարտավորությունները, կա՛մ սեփական միջոցները ներդնել բանկերում: Այս իրավիճակում, զարմանալի չէ տնտեսական ակտիվության դանդաղումը, ավելին, սպասելի է դրա վատթարացումը հետագա ամիսներին:

5. Գնաճի տեմպը կտրուկ արագացել է: Հուլիսին գնաճը հասել է 8.2%-ի՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԿԲ-ն նախորդ ամիսներին շարունակաբար բարձրացնում էր դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը: Վերջինիս բարձրացումը կարող է հանգեցնել տնտեսական ակտիվության հետագա դանդաղմանը, սակայն գնաճի բարձր ցուցանիշը նույնպես իր բացասական հետևանքներն է ունենում, մասնավորապես՝ բնակչության իրական եկամուտների կրճատման տեսքով: Հետևաբար, այս դժվարին իրավիճակում անհրաժեշտ է դրամավարկային քաղաքականությունը համակարգել՝ հարկաբյուջետային քաղաքականության հետ իրավիճակի արդյունավետ կարգավորումն ապահովելու համար:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: